ԿԵՐՊԱՐԱՆԱԿՑՎԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՎԱՆԸ

Տասներորդ հաղորդում

Կերպարանակցվել Քրիստոսի մահվանը
և հասնել «դուրս-հարության»-ը

Գրվածքների ընթերցում. Փլպ 3:10-11

I. Փլպ 3:10-ում Պողոսն ասում է. «....Նրա մահվանը կերպարանակցվելով». այս արտահայտությունը ենթադրում է, որ Պողոսը ցանկանում էր Քրիստոսի մահն ընդունել որպես իր կյանքի կաղապարը.

Ա. Քրիստոսի գիտության գերազանցությունն ունենալը, ամեն բան կորուստ համարելը, Քրիստոսին շահելը, Նրա մեջ գտնվելը, Նրան ճանաչելը, Նրա հարության զորությունը ճանաչելը և Նրա չարչարանքների հաղորդակցությունը ճանաչելը հանգեցնում են մեկ բանի՝ Քրիստոսի մահվանը կերպարանակցվելուն՝ խխ. 7-10:

Բ. Քրիստոսի մահվանը կերպարանակցվելը Քրիստոսի բոլոր ապրումների հիմքն է՝ 1:20-21ա, 3:9-10:

Գ. Քրիստոսի մահվան «կաղապարը» վերաբերում է նրան, որ Քրիստոսը մշտապես մահվան էր մատնում Իր բնական, մարդկային կյանքը, որպեսզի Աստծու կյանքի շնորհիվ ապրեր՝ Հվի 6:57ա.

1. Երբ Տեր Հիսուսը երկրի վրա էր, Նա խաչված կյանքով էր ապրում. խաչված կյանքով ապրելով՝ Նա կենդանի էր Աստծու համար և ապրում էր Նրան:
2. Նա միշտ մահվան էր մատնում Իր մարդկային կյանքը, որպեսզի Նրա ներսում եղող աստվածային կյանքը դուրս հոսեր՝ 10:10բ-11, 17:
3. Ապրելուն զուգընթաց Նա մեռնում էր. մեռնում էր հին ստեղծագործության համար, որպեսզի ապրեր նոր ստեղծագործության մեջ եղող կյանքով. սա է Փլպ 3:10-ում «Նրա մահվանը» արտահայտության նշանակությունը:

Դ. Քրիստոսի մահը «կաղապար» է, որին մենք կերպարանակցվում ենք այնպես, ինչպես խմորն է կաղապարի մեջ դրվում՝ թխվելու համար, և դրան կերպարանակցվում.

1. Աստված մեզ դրել է Քրիստոսի մահվան «կաղապարի» մեջ և օր օրի կաղապարում է մեզ՝ կերպարանակցելով այդ մահվանը՝ Հռմ 6:3-4:
2. Մեր կյանքը պետք է կերպարանակցվի այդ «կաղապարին». մենք պետք է մեռնենք մեր մարդկային կյանքի համար, որպեսզի ապրենք աստվածային կյանքով՝ Գղտ 2:20, Բ Կրք 4:10-11:
3. Եթե մահվան մատնենք մեր բնական կյանքը, զգացում կունենանք, որ մեր ներսում մեկ ուրիշ կյանք ունենք՝ աստվածային կյանքը. այս կյանքը կազատագրվի, այդժամ մեր փորձառության մեջ մենք կկերպարանակցվենք Քրիստոսի մահվանը՝ Հվի 10:10բ, Ա Հվի 5:11-12:

4. Քրիստոսի մահվան «կաղապարի» մեջ բնական մարդը սպանվում է, հին մարդը խաչվում է, և «ես»-ը՝ ի չիք դարձվում՝ Բ Կրթ 4:16, Հռմ 6:6, Մտթ 16:24:
5. Եթե թույլ տանք, որ մեր հանգամանքները մեզ սեղմելով մտցնեն այդ «կաղապարի» մեջ, մեր ամենօրյա կյանքը կընդունի Քրիստոսի մահվան կաղապարի ձևը՝ Հռմ 8:28-29:
6. Մենք կերպարանակից ենք լինում Քրիստոսի մահվան «կաղապարին» Քրիստոսի հարության զորությամբ՝ Փլպ 3:10, Հվի 11:25, Եփս 1:19-20, Երգ 2:8-13:

Ե. Քրիստոսի մահվանը կերպարանակցվելուն զուգընթաց մենք փորձառաբար ապրում ենք ամեն բան իրագործող մահը.
1. Քրիստոսի մահվանը կերպարանակցվելով՝ մենք փորձառաբար ապրում ենք Նրան Նրա մահվան մեջ՝ կյանքի ազատագրման, ներդրման ու բազմապատկման համար՝ Հվի 12:24-25, Բ Կրթ 4:12:
2. Աստծուն փառավորելու միակ ճանապարհը Քրիստոսի մահվանը կերպարանակցվելն է. որքան շատ ենք կերպարանակցվում Քրիստոսի մահվանը, այնքան շատ ենք փառավորում Հորը՝ Հվի 12:28, 13:31:
3. Երբ մեռնում ենք Քրիստոսի մահով ու կերպարանակցվում ենք Նրա մահվանը, դառնում ենք ուրիշներին դեպի Քրիստոսը ձգող մագնիս՝12:32:
4. Որքան շատ ենք մեռնում Քրիստոսի հետ, այնքան շատ ենք փրկում մեր շունչ-կյանքն առ հավիտենական կյանք՝ խ. 25:
5. Եթե պատրաստ լինենք կերպարանակցվելու Քրիստոսի մահվանը, մենք կհաղթենք աշխարհին և պարտության կմատնենք Սատանային՝ խ. 31, Եբր 2:14:

II. Քրիստոսի մահվանը կերպարանակցվելու արդյունքում մենք կարող ենք հասնել մեռելներից «դուրս-հարության»-ը և գալ դրան՝ Փլպ 3:11.

Ա. «Դուրս-հարություն»-ը հատուկ հարությունն է՝ գերհարությունը, որը մրցանակ է լինելու հաղթող սրբերի համար՝ Հյտ 20:4, 6.
1. Բոլոր հավատացյալները, որոնք Քրիստոսի մեջ ննջած են, Տիրոջ վերադարձի ժամանակ կմասնակցեն մեռելներից հարությանը՝ Ա Թսղ 4:16, Ա Կրթ 15:52:
2. Տիրոջ հաղթողները կվայելեն այդ հարության «գերբաժինը»՝ հատուկ բաժինը, հարություն, որում նրանք կստանան թագավորության պարգևը. Պողոս առաքյալը հենց սա էր փնտրում՝ Եբր 11:35, 26:
3. «Դուրս-հարություն»-ը պետք է մեր քրիստոնեական կյանքի նպատակն ու վերջնակետը լինի՝ Փլպ 3:11-15ա:

Բ. «Դուրս-հարության»-ը հասնել նշանակում է «դուրս-հարության»-ը գալ. սա մեզնից պահանջում է հաղթականորեն վազել մրցավազքը մրցանակի համար:

Գ. «Դուրս-հարության»-ը մեր հասնելը ենթադրում է, որ մեր ողջ էությունը աստիճանաբար ու շարունակաբար հարուցանվում է՝ Ա Թսղ 5:23.
   1. Աստված նախ՝ մեր մեռած հոգին հարուցանեց. ապա՝ Նա անցնում է մեր շունչը և մեր մահկանացու մարմինը հարուցանելուն, մինչև որ մեր ողջ էությունը՝ հոգին, շունչն ու մարմինը, Նրա կյանքի շնորհիվ ու Նրա կյանքով լիովին կհարուցանվի մեր հին էությունից՝ Եփս 2:5-6, Հռմ 8:6, 11:
   2. Եթե կերպարանակցվենք Քրիստոսի մահվանը, մեր էության յուրաքանչյուր մաս աստիճանաբար կհարուցանվի. ուստի քրիստոնեական կյանքը հարության գործընթաց է:
   3. Մենք այս նպատակին կարող ենք հասնել՝ միայն խաչված կյանքով ապրելու շնորհիվ Քրիստոսի մահվանը կերպարանակցվելով՝ Փլպ 3:10-11:
   4. Քրիստոսի մահվան մեջ մենք փորձառաբար ապրում ենք հին ստեղծագործությունից նորին անցնելու գործընթացը՝ խխ. 10-11, Բ Կրթ 5:17:

Դ. «Դուրս-հարություն»-ը հարություն է հին ստեղծագործությունից առ նոր ստեղծագործությունը՝ Գղտ 6:15, Բ Կրթ 5:17.
   1. Լինել «դուրս-հարության» մեջ նշանակում է թողնել հին ստեղծագործությանը վերաբերող բոլոր բաները ու տեղափոխվել Աստծու մեջ:
   2. «Դուրս-հարության» մեջ հին ստեղծագործության տարր չկա. փոխարենն ամեն բան լցված է աստվածային տարրով՝ Հյտ 21:5ա:

Ե. Պողոսի համար «ապրել»-ը Քրիստոսն էր՝ որպես «դուրս-հարություն»՝ Փլպ 1:21ա, 3:11.
   1. «Դուրս-հարություն»-ը փաստացի Քրիստոսի թանկ, թանկագին, գերազանց Անձն է. Քրիստոսը Նա է, ով խաչելության և հարության միջոցով դուրս եկավ հին ստեղծագործությունից և Աստծու մեջ մտավ՝ Հվի 14:3, 20, Եբր 6:19-20:
   2. Քրիստոսն Ինքը, ում մենք պետք է ապրենք, «դուրս-հարություն»-ն է՝ Փլպ 1:21ա, 3:11, Հվի 11:25:

Զ. Փլպ 3:12-ում Պողոսն արդեն ձեռք էր բերել բոլոր հավատացյալների համար ընդհանուր եղող փրկությունն ընդհանուր հավատքով, բայց հարության հատուկ բաժինը դեռ չէր ստացել.
   1. Այդ բաժինը ձեռք բերելու համար նա պետք է ճգտեր, վազեր ու հաղթականորեն ավարտեր իր մրցավազքը՝ Բ Տմթ 4:7-8:
   2. Փլպ 3:12-ում որպես «ճգտում եմ» թարգմանված հունարեն բառը նույն բառն է, որը «հալածել» է թարգմանվում. այն նաև նշանակում է «հետապնդել», «հետևից ընկնել», «ինչ-որ բանի նկրտել».
      ա. Պողոսը հենց այսկերպ էր վազում մրցավազքը, որպեսզի մրցանակը ստանար և հասունության հասներ:
      բ. Փրկվելուց առաջ նա հալածում, հետապնդում էր Քրիստոսին. փրկվելուց հետո սկսեց Քրիստոսին այն աստիճան ճգտել, որ հետապնդում էր Նրան, բայց արդեն դրական իմաստով:

Է. Մենք պետք է կերպարանակցվենք Քրիստոսի մահվանը, որպեսզի ամեն գնով հասնենք մեռելներից «դուրս-հարության»-ը. միայն այսկերպ Տերը կարող է առաջ շարժվել Իր վերականգնման մեջ, միայն այսկերպ Տերը կարող է Իր եկեղեցին կառուցել, միայն այսկերպ կարելի է հարսին պատրաստել և միայն այսկերպ կարելի է Տիրոջը վերադարձնել՝ խխ.10-11, Մտթ 16:18, Հյտ 19:7-9ա, 22:14, 20:

© 2026 Living Stream Ministry